ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՄ ՄԵԼՔՈՄՅԱՆԻՆ

Հարգելի Գայանե Մելքոմ Մելքոմյան.

Ի պատասխան Ձեր 08.07.2019թ. հ.01/291 գրության՝ տեղեկացվում է, որ ընթանում են շինարարական և կենցաղային աղբի թափման համար ոչ սահմանված տարածքների գույքագրման աշխատանքներ, ինչպես նաև վերոնշյալ խնդրահարույց տարածքներում ՀՀ ոստիկանության հետ համատեղ իրականացվում է ուժեղացված հսկողություն շինարարական և կենցաղային աղբ թափելու դեպքերը բացառելու ուղղությամբ:

Տեղեկացվում է նաև, որ տարվում են անհրաժեշտ աշխատանքներ չսահմանված վայրում աղբ թափող քաղաքացիներին բացահայտելու և վերջիններիս նկատմամբ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 43.1 հոդվածով նախատեսված տուգանք կիրառելու ուղղությամբ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Նոր Նորք վարչական շրջանի ծրագրերով տեսախցիկների տեղադրման կամ արգելող պատնեշների կառուցման աշխատանքներ նախատեսված չեն: Նմանատիպ ծրագրերի և ֆինանսական միջոցների առկայության դեպքում հաշվի կառնվի նաև Ձեր առաջարկը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ